ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Կերպարվեստ

(առարկա)

ԹԵՄԱ Հին և Հելլենիստական Հայաստան

ԿԱԶՄԵՑ՝ Ելենա Մկրտչյան Նապոլեոնի

(անուն , ազգանուն , հայրանուն)

Կապանի №1 հիմնական դպրոց

(Դպրոցի անվանունը)

ՂԵԿԱՎԱՐ՝ Ելենա Մկրտչյան

« Կապանի №2 ավագ դպրոց » ՊՈԱԿ

(վերապատրաստող կազմակերպության անվանումը)

Կապան 2022

Բովանդակություն

Ներածություն

Գլուխ 1

1.1 Ինչ է Արվեստը ---------- 3

1.2 Նախնադարյան Կերպարվեստ ---------- 4

1.3 Կերպարվեստը նախնադարյան Հայաստանում ---------- 8

Գլուխ 2

2.1 Հին աշխարհի կերպարվեստ

Հին և հելլենիստական Հայաստան ---------- 10

Դասի պլան ---------- 21

Ներածություն

Ինչ է արվեստը

Արվեստը հասարակության հոգևոր կյանքի հատուկ բնագավառ է, որը գեղարվեստորեն արտացոլում է ինչպես մեզ շրջապատող իրականությունը, այնպես էլ արվեստագետի ստեղծագործական երևակայությունը:

Ի սկզբանե արվեստ էր համարվում որևէ գործում դրսևորված վարպետության բարձր աստիճանը: Հետագայում արվեստ հասկացությամբ ավելի հաճախ սկսեցին բնութագրել ստեղծագործական այն գործունեությունը, որի նպատակն ու պարտադիր պայմանն է իրական աշխարհի արտացոլումը և վերափոխումը՝ գեղեցկության օրենքներին համապատասխան:

Արվեստը ճանաչումն գնահատում է իրական կյանքը, ձևավորում մարդկանց հոգևոր աշխարհը, զարգացնում նրանց ստեղծագործական կարողությունը: Արվեստի ճանաչողական դերն այն մոտեցնում է գիտությանը: Արվեստագետը, ինչպես և գիտնականը, ձգտում է հասկանալ կյանքի իմաստը,պատահական և անցողիկ երևույթների մեջ տեսնել ընդհանուրը, բնահատուկն ու տիպականը: Բայց ի տարբերություն գիտության՝ արվեստը ճշմարտությունն արտահայտում է ոչ թե վերացական հասկացությունների, այլ գեղարվեստական կենդանի ու կոնկրետ կերպարների միջոցով:

Թեման արդիական է, քանի որ արվեստը սերտորեն կապված է ազգային մշակույթի և այն հասարակական-պատմական պայմանների հետ, որոնցում ստեղծվում ու զարգանում է: Կերպարվեստը արվեստի հնագույն ճյուղերից մեկն է, ուստի կարևոր է ճանաչել կերպարվեստի էվոլուցյոն ընթացքը, տարբերակել կերպարվեստի տեսակներն ու ժանրերը: Ուսումնասիրել թեման խորապես կհասկանանք կերպարվեստի ծագումնաբանության զարգացման ընթացքը հայկական մշակույթում ուսումնասիրելիս, կտարանջատենք այլ մշակույթներից:

Գլուխ 1. Նախնադարյան կերպարվեստը

1. 1 Նախնադարյան կերպարվեստի առանձնահատկությունները, պատմական շրջափուլերը և հուշարձանները

Նախնադարյան է կոչվում գրերիգյուտից շատ ավելի վաղ ժամանակներում ստեղծված արվեստը: Մի շարք քարանձավներում, որտեղ շուրջ 100.000 տարի առաջ բնակվել է նախնադարյան մարդը, հնագետները հայտնաբերել են ներկանյութերի հետքերով քարեր: Մոտավորապես այդ ժամանակներից է սկսվում արվեստի սաղմնավորման երկարատև պատմությունը, որն ավարտվեց սրանից շուրջ 40.000 տարի առաջ տեղի ունեցած մեծ պայթյունով ՝ քարանձավային նկարչության ստեղծումով:

Պատմաբանների ու հնագետների ուսումնասիրությունները հիմք են տալիս ասելու, որ արվեստի առաջին հուշարձանները վերաբերում են պալեոլիթի՝ հին քարեդարի ժամանակաշրջանին (մ.թ.ա. 40-12-րդ հազարամյակներ): Մեր հեռավոր նախնիների արվեստն իր բարձրակետին է հասել մ.թ.ա. 25-12-րդ հազարամյակներում՝ ուշ քարեդարի ժամանակ, որը երբեմն բնութագրում են որպես նախնադարյան արվեստի §ոսկեդար¦, քանի որ հենց այդ շրջանում են ծնունդ առել կերպարվեստի գրեթե բոլոր տեսակները՝ քարանձավների պատերն ու թաղերը ծածկող որմնանկարը, հարթաքանդակն ու կլոր քանդակը, ոսկրի և քարի վրա պատկերված գծանկարը:

Նախնադարյան արվեստագետի ստեղծած առաջին պատկերները՝ սեփական ձեռքերի (ձեռնաթաթերի) ուրվագծերն ու դրոշմատիպերը, դեռ չափազանց պարզունակ են և անարվեստ: Դրանց հետ մեկտեղ ու միաժամանակ նա ստեղծում է նաև ալիքաձև գծերից կազմված զարդանախշեր՝ այսպես կոչված *մակարոններ:* Այստեղից կարելի է եզրակացնել, որ կերպարվեստի ձևերն ի սկզբանե եղել են երկու տեսակի՝ ռեալիստական և պայմանական (սխեմատիկ): Նկարելու համար օգտագործում էին հողային ներկերն ու հանքաներկերը (օրինակ դեղին, կարմիր և դարչնագույն օքրան), փայտածուխը, սպիտակ կավը, ինչպես նաև բուսական ներկանյութերը, որոնք խառնում էին կենդանական ճարպերի ու կենդանիների արյան հետ կամ բացում ջրով:

Նախնադարյան նկարներում գերիշխում են որսի կենդանիների պատկերները, որոնք աստիճանաբարբփեռք են բերում ավելի իրական կերպարանք և ներկայանում տարբեր դիրքերում՝ հանգիստ վիճակում կամ վազքի պահին: Նկարչության մեջ անցում է կատարվում ներկով հավասարաչափ լցված պարզագույն ուրվանկարից դեպի բազմերանգ որմնանկարը: Կենդանիների մարմինները տրվում են մի քանի

խոշոր բծերով, իսկ ձևերը ծավալային տպավորություն են թողնում գուներանգների ուժգնության աստիճանի տատանման շնորհիվ:

Նախնադարյան արվեստը հայտնաբերվել և ուսումնասիրության առարկա է դարձել միայն 1879 թվականից հետո, երբ տեղի ունեցավմի իրադարձություն, որը հիմնովին փոխեց արվեստի գոյացման մասին գիտության մեջ մինչև այդ արմատավորված պատկերացումները: Հենց այդ թվականին իսպանացի ազնվական և ինքնուս հնագետ Մարսելինոդե Սաուտուոլայի մանկահասակ դուստրը՝ ութամյա Մարիան, հյուսիսային իսպանիայի քարանձավներից մեկում՝ Ալտամիրայի թաղերի վրա պատահաբար նկատեց բիզոնների՝ վայրի ցուլերի, և այլ կենդանիների խոշոր (1-2) մետրանոց ու լավ պահպանված մեծաթիվ որմնանկարները, որոնց գեղարվեստական կատարյալ ձևերին կարող էր նախանձել նույնիսկ ժամանակակից նկարիչը: Դինամիկ հզոր ուժով օժտված կենդանիները կարծես իրական լինեին: Դրանք անձավներում հայտնաբերված քարեդարյան նկարչության առաջին նմուշներն էին, որոնք հրապարակվեցին 1880 թվականին և իսկապես ցնցող տպավորություն թողեցին, թեև սկզբում առանձնապես վստահություն չներշնչեցին: Շատերը զարմացած էին՝ միթե խաբեության և մարդկանց մոլորեցնելու համար հնարավոր չէր մոգոնել որևիցե ավելի սրամիտ բան, քան ծածկել հսկայական քարանձավի պատերն ու առաստաղները զանազան կենդանիների հարյուրավոր որմնանկարներով: Կտրականապես մերժելով այն միտքը, որ դրանք ստեղծել է նախնադարյան մարդը՝ գիտնականներից և մասնագետներից ոմանք անգամ պատրաստ էին այդ որմնանկարները վերագրել ինչ-ինչ պատճառներով Իսպանիայում իբր հայտնված հին հույներին կամ հռոմեացիներին: Սակայն 1895 թվականին Ֆրանսիացի հնագետ Էմիլ Ռիվյերը Ֆրանսիայի հարավային շրջաններից մեկում հայտնաբերում է նկարներով պատված երկրորդ՝ Լա Մուտ քարանձավը և այդպիսով հատատում Ալտամիրայում հայտնաբերված որմնանկարների իսկությունը: 20-րդ դարասկզբին գրեթե իսպառ վերացան նախնադարյան մարդկանց նկաչական ունակությունների վերաբերյալ եղած կասկածները՝ ստեղծվեցին քարանձավային առաջին թանգարանները, և նորահայտ արվեստը լայն ճանաչում ստացավ:

Նախնադարյան արվեստագետի ստեղծած առաջին պատկերները՝ սեփական ձեռքերի (ոտնաթաթերի) ուրվագծերն ու դրոշմատիպերը, դեռ չափազանց պարզունակ են և անարվեստ: Դրանց հետ մեկտեղ ու միաժամանակ նա ստեղծում է նաև ալիքաձև գծերից կազմված զարդանախշեր՝ այսպես կոչված մակարոններ: Այստեղից կարելի է եզրակացնել, որ կերպարվեստի ձևերն ի սկզբանե եղել են 2 տեսակի՝ ռեալիստական և իրատեսական (սխեմատիկ): Նկարելու համար օգտագործում էին հողային ներկերն ու հանքաներկերը (օրինակ դեղին, կանաչ, և դարչնագույն օքրան), փայտածուխը, սպիտակ կավը, ինչպես նաև բուսական

ներկանյութերը, որոնք խառնում էին կենդանական ճարպերի ու կենդանիների արյան հետ կամ բացում ջրով:

Նախնադարյան նկարներում և քանդակներում գերիշխում են որսի կենդանիների պատկերները, որոնք աստիճանաբար ձեռք են բերում ավելի իրական կերպարանք և ներկայանում տարբեր դիրքերում՝ հանգիստ վիճակում կամ վազքի պահին: Նկարչության մեջ անցում է կատարվում ներկով հավասարաչափ լցված պարզագույն ուրվանկարից դեպի որմնանկարը: Կենդանիների մարմինները տրվում են մի քանի խոշոր բծերով, իսկ ձևերը ծավալային տպավորություն են թողնում գուներանգների ուժգնության աստիճանի տատանման շնորհիվ:

Նախնադարյան կերպարվեստն ի սկզբանե բաժանվել է 2 տեսակի: Առաջինն ընդգրկում է անձավների պատերին ու առաստաղներին, երբեմն էլ նաև հատակին եղած պատկերները և բնորոշվում է որպես ժայռանկարներ ու ժայռաքանդակներ: Երկրորդի մեջ մտնում է քարից, ոսկրից, եղջյուրից պատրաստված գեղարվեստական արտադրանքը՝ (այդ թվում՝ կլոր քանդակները և արձանիկները): Այն կարելի է ներկայացնել որպես մոբիլ՝ շարժական կամ փոխադրելի արվեստ: Ինչպես առաջին, այնպես էլ երկրորդ տեսակներում հազվադեպ հանդիպող մարդկանց կերպարներն այնքան իրական ու ռեալիսկան չեն, որքան կենդանիների՝ մարմնաձևերի ստույգ վերարտադրությամբ աչքի ընկնող պատկերները: Թե՛ տղամարդկանց, թե՛ կանանց ֆիգուրները,որպես կանոն, ներկայացված են մերկ վիճակում: Եթե տղամարդկանց դիմագծերը, մասնավորապես՝ աչքերն ու բերանը, հստակորեն շեշտադրված են, ապա կանանց դեմքերն առհասարակ բացակայում են:

Մայր իշխանության ժամանակներում կինը՝ կացարանի տիրուհին և տան օջախի պահապանուհին, հասարակության մեջ գլխավոր տեղն էր գրավում: Նախածնող մոր պաշտամունքի հետ են կապված գեր՝ մեծ կրծքերով հաստափոր կամ հղի կանանց մերկ ֆիգուրները, որոնց հեգնորեն անվանում են վեներաներ:

Դրանցից, թերևս, ամենահայտնին և հնագույններից մեկը Վիլենդորֆյան Վեներան է (կրաքար, մ.թ.ա. 25-23-րդ հազարամյակներ):

Նախնադարյան քանդակները հիմնականում կերտել են ոսկրից, այդ թվում՝ մամոնտի ժանիքներից, ինչպես և տարբեր տեսակի փխրաքարերից: Հայտնի են նաև կավից ծեփված և ապա թրծված արձանիկներ, որոնք խեցեգործական արվեստի հնագույն նմուշներ են: Ամենայն հավանականությամբ, տարածված են եղել նաև փայտե քանդակները, սակայն դրանք (եզակի բացառություններով) դարերի ընթացքում ոչնչացել են՝ նյութի անկայունության և կարճակեցության պատճառով:

Մեզոլիթի՝ միջին քարեդարի ժամանակաշրջանում (մ.թ.ա. 12-8-րդ հազարամյակներ) նախնադարյան արվեստի բնույթը զգալիորեն փոխվում է: Կենդանիների պատկերներն աստիճանաբար ավելի համեստ տեղ են զբաղեցնում: Արվեստի կենտրոնական թեման կրկին մնում է բնության տարերային ուժերի դեմ մղվող պայքարը: Որմնանկարներում առաջին անգամ ի հայտ է գալիս մարդու կերպարը, որը ներկայանում է որսի ժամանակ, թշնամիների հետ մարտնչելիս կամ աշխատանքային խաղաղ տեսարաններում՝ նախիր քշելու,մեղրահավաքի և այլ պահերին:



Նեոլիթի՝ նոր քարեդարի դարաշրջանում (մ.թ.ա. 8-4-րդ հազարամյակներ) շարունակում է զարգանալ և առավել լայնտարածում է ստանում մանր պլաստիկան: Կենդանիների արձանիկները թեև աչքի են ընկնում ընդհանրացված ձևերով, սակայն պահպանում են ռեալիստական գծերը: Մինչդեռ նույն ժամանակահատվածում ստեղծված որմնանկարներն ու գծանկարները կրում են առավելապես օրնամենտալ բնույթ, ըստ որում գերակշռում են երկրաչափական զարդերն ու նախշերը: Մայրության պաշտամունքի հետ են կապվածկավից ու քարից կերտված կանանց փոքրաչափ պատկերները: Հենց այդ ժամանակ ենառաջին անգամ երևան գալիս մանկանը գրկածնմոր քանդակները:

Բրոնզեդարում (մ.թ.ա. 3-2-րդ հազարամյակներ) նախնադարյան հասարակության մեջ նկատվում են որակական նոր տեղաշարժեր՝ մարդիկ սկսում են օգտագործել մետաղից՝ հիմնականում բրոնզից պատրաստված աշխատանքային գործիքներ, արհեստն անջատվում է հողագործությունից,մայր իշխանությունն իր տեղը զիջում է հայր իշխանությանը: Ընտանիքում, տոհմում և հասարակության մեջ իշխող դերն արդեն պատկանում է ոչ թե կնոջը, այլ տղամարդուն, ոչ թե մորը, այլ՝ հորը: Արվեստի հետագա զրգացման համար բարենպաստ պայմաններ են ստեղծում տարբեր ցեղերի ու ցեղախմբերի առաջացումը, աշխատանքի կազմակերպման ավելի բարձր մակարդակը, կուտակած փորձն ու գիտելիքները:

1.2 **Կերպարվեստը նախնադարյան Հայաստանում**

20-րդ դարի սկզբից Հայկական լեռնաշխարհում ձեռնարկվածնհնագիտական պեղումների և հետազոտությունների արդյունքում բացվել են հնագույն բնակատեղիներ, որոնցում պահպանվել են մ.թ.ա 6-3-րդ հազարամյակներին վերաբերող նյութական և գեղարվեստական մշակույթի վկայություններ:

20-րդ դարի երկրորդ կեսին, ինչպես նաև վերջին տասնամյակների ընթացքում, հայտնաբերվել են նախնադարյան արվեստի՝ թեմաների բազմազանությամբ աչքի ընկնող մեծաթիվ հուշարձաններ՝ ժայռապատկերներ, որոնք կարևոր աղբյուր են հանդիսանում Հայկական լեռնաշխարհում ապրած ցեղերի ոչ միայն նյութական, այլև հոգևորուգեղարվեստակամ մշակույթի պատմությունն ուսումնասիրելու համար: Հին արվեստի այդ հուշարձաններից ամենահներն ստեղծվել են մ.թ.ա. 6—5-րդ հազարամյակներում, այսինքն՝ նոր քարեդարի դարաշրջանում:

Այսպես, համեմատաբար վերջերս՝ 2002 թվականին, Քասախի կիրճում (Արագածոտնի մարզ), Արայի լեռան արևելյան ստորոտին գտնվող քարայրում (§Կարմիր քարանձավ¦ հայտնաբերվել են ժայռապատկերներ, որոնք հանգամանորեն ուսումնասիրվել են 2003-2004 թվականներին):

Բաց վարդագույնից մինչևմուգ կարմիր երանգներ ունեցող պատկերներն արված են օքրայով՝ բնական հանքային ներկանյութով:

Դրանք հիմնականում մարդկանց ու կենդանիների պարզունակ պատկերներն են ու տարատեսակ նշաններ:

Ժայռապատկերների մեծ մասը թվագրվում է բրոնզեդարով (մ.թ.ա. 3-2-րդ

հազարամյակներ): Դրանք սփռված են Արագածի փեշերին, Գեղաման Սյունյաց լեռների գագաթներին՝ ծովի մակարդակից 2000-ից մինչև 3500 մետր բարձրության վրա:

Հայաստանում ժայռապատկերների խոշորագույն ցուցասրահներից են Ուխտասարը՝ Սյունիքի մարզում և Պայտասարը՝ Կոտայքի մարզում:

Ժայռերին փորագրված են ինչպես գծային, այնպես էլ ծավալային պատկերներ, որոնցից շատերում տպավորված են Հայկական լեռնաշխարհում հնուց բնակվող կենդանիները՝ ձին, մորուքավոր այծը, վայրի խոյը, ցուլը, եղջերուն, վիթը, վարազը, գայլը, չախկալը, վագրը, տարատեսակ թռչուններ: Կենտրոնական տեղ է զբաղեցնում որսորդական թեման, որն ուշադրություն է գրավում իր մանրամասներով, որսորդների բնահատուկ կեղվածքով ու շարժումներով:

Բացառիկ դրամատիզմով է առանձնանում մարդու և առյուծի մենամարտի տեսարանը: Քարերից շատերի վրա կարելի է տեսնել ծիսական պարերի պատկերներ: Լավ են ներկայացված նախնադարյան փոխադրամիջոցները՝ երկանիվ կամ քառանիվ սայլերն ու կառքերը: Հետաքրքրությամբ են դիտվում հողագործական աշխատանքների հետ կապված դրվագները, օրինակ՝ արոր գործածող մաճկալի պատկերը:

Նույն ժամանակաշրջանի նախնադարյան մշակույթի ու արվեստի հուշարձաններ են հայտնաբերվել նաև Գառնիի ամրոցի և Սևանա լճի ափամերձ Ծովինար գյուղի մոտակայքում եղած ուրարտական ամրոցի պեղումների ժամանակ:

Գլուխ 2 Հին Աշխարհի Կերպարվեստ

Գլուխ 2.1 Հին և հելլենիստական Հայաստան

Մ.թ.ա. 6-րդ դարի սկզբին Վանի թագավորության տարածքում առաջացավ Երվանդունիների հայկական թագավորությունը , որը շուտով հայտնվեց Մարաստանի և ապա ՝ Աքեմենյան Իրանի տիրապետության տակ: Մ.թ.ա. 521-519 թվականներին հայ ժողովուրդը զինված ապստամբության ելավ պարսիկների դեմ , սակայն Դարեհ I (Մ.թ.ա. 522-486) պարսից արքան մեծ դժվարությամբ կոտրեց հայերը դիմադրությունը: Մ.թ.ա. 331 թվականին Աքեմենյան կայսրությունը կործանեցին Ալեքսանդր Մակեդոնացու գլխավորած հունամակեդոնական զորքերը: Սկսվեց Հին Արևելքի , այդ թվում նաև Հայաստանի պատմության հաջորդ ՝ հելլենիստական շրջանը:

Դիտիր Երվանդունիներ մասին պատմող ֆիլմը

Հենց այդ ժամանակ ՝ Մ.թ.ա. 4-3-րդ դարերում, Հայաստանում հիմնադրվեցին մի շարք քաղաքներ, որոնցից էին Արմավիրը, Երվանդաշատը, Երվանդակերտը, Անի-Կամախը նն: Քաղաքաշինությունը հատկապես լայն ծավալներ ստացավ Մ.թ.ա. 190 թվականին ՝ Սելևկյան կայսրութունից Հայստանի անկախացումից և մեկ ընդհանուր թագավորության կազմում հայկական հողերի միավորվելուց հետո:

Արտաշես Ա Բարեպաշտ (Մ.թ.ա. 189-160) թագավորը հիմնադրեց մայր քաղաք Արտաշատը, իսկ Տիգրան Մեծի (Մ.թ.ա. 95-55) կառավարման օրոք, երբ Հայաստանը դարձավ Մերձավոր Արևելքի հզոր պետություններից մեկը, կառուցվեցին Տիգրանակերտը և համանուն այլ քաղաքներ:

Տվյալ շրջանի հայ արքաները նպաստում էին ոչ միայն առևտրի, արհեստների և գիտության, այլև արվեստի զարգացմանը: Հայաստանում գրական լեզուն հունարենն էր: Արտաշատում և Տիգրանակերտում գործում էին հելլենիստական թատրոններ ՝ հույն դերասանների մասնակցությամբ: Տիգրան Մեծը մետաղադրամներ էր հատում սեփական դիմապատկերով և հունարեն մակագրությամբ: Նրա որդին Արտավազդ Բ (Մ.թ.ա. 55-34) թագավորը, հունարենով գրված ողբերգությունների, ճառերի ու պատմական աշխատությունների հեղինակ էր: Հայաստան էին բերվում հելլենիստական արվեստի նմուշներ ու արհեստագործական բազմաթիվ իրեր: Նմանատիպ հուշարձաններ էին ստեղծվում և առարկաններ արտադրվում նաև հայական քաղաքներում:

Հին Հայաստանի արվեստի զարգացումը սերտորեն կապված էր մի կողմից՝ ճարտարապետական շենքերի ու շինությունների պատկերազարդման , իսկ մյուս կողմից կիրառական արվեստները խթանող արվեստների հետ։

Այդ շրջանի հայկական քանդակագործությանը վերաբերվող տեղեկություններ հիմնականում հենվում էին գրավոր աղբյուրների վրա, իսկ կոնկրետ հուշարձաններից մեզ հասել են հատուկենտ, այն էլ՝ վնասված օրինակներ։

Հին Հայաստանի դիցարանը բաղկացած էր բազմաթիվ աստվածներից և աստվածուհիներից, որոնց քարակերտ, փայտե և պղնձ արձանները դրվում էին հեթանոսական տաճարներում՝ այսպես կոչված մեհյաններում։

Ինչպես վկայում է հայ պատմահայր Մովսես Խորենացին՝ Երվանդունիների թագավության առաջին մայրաքաղաք Արմավիրում , որը նաև պաշտամունքային խոշոր կենտրոն էր , Վաղարշակ Ա (Մ.թ.ա. 247-225) թագավորն իր կառուցած տաճարում տեղադրել է Արեգակի, Լուսնի և սեփական նախնյաց արձանները։ Երվանդաշատ կոչված նոր մայրաքաղաքի հիմնադիր, Երվանդունիների արքայական տոհմի վերջին՝ Երվանդ Դ (Մ.թ.ա. 220-201) թագավորը հեթանոսական աստվածների արձաններն Արմավիրից տեղափոխել է Բագարան՝ Ախուր յան գետի աջափնյա քաղաք։ Հետագայում Արտաշես Ա-ն այդ քանդակները տարել է Արտաշատ։ Մովսես Խորենացին գրում է, որ դրանց թվում էին Անահիտի (Արտեմիսի), Տիրի (Ապոլլոնի) « և բոլոր հայրենական կուռքերի » արձանները : Այդպիսի արձաններ են եղել նաև երկրի տարբեր մարզերում կառուցված հեթանոսական տաճարներում։ Աստվածների հայր, երկնքի և երկրի արարիչ , հայկական դիցարանի գերագույն աստված Արամազդի քանդակը տեղադրված էր Եփրատի ափին։ Պտղաբերության աստված Ամանորի և հյուրընկալության աստված Վանատուրի արձանները դրված էին Բագավանում։

Հայաստանում առանձնահատուկ նշանակություն ուներ Արամազդի դստեր՝ Անահիտ աստվածուհու պաշտամունքը : Ինչպես նշում է հին հույն պատմիչ և աշխարհագրագետ Ստրաբոնը, Անահիտը հեթանոսական Հայաստանում առավել պաշտված դիցուհի էր , որի պատվին կառուցված բազմաթիվ տաճարներում դրվել են նրա ոսկե և բրոնզե քանդակները : Անահիտի ոսկե քանդակներից մեկի մասին է հիշատակում հին հռոմեացի գրող՝ անտիկ շրջանի հանրագիտական բնույթ ունեցող խոշորագույն աշխատության՝ 37 գրքից բաղկացած «Բնական պատմության» հեղինակ Պլինիոս Ավագը։ Արամազդի մյուս դստեր՝ մայրության , իմաստության, ողջախոհության և պատերազմի աստվածուհի Նանեի արձանը դրված էր Մեծ Հայքի Թիլ կոչված բնակավայրում : Արամազդի որդու՝ Արեգակի աստված Արեգ-Միհրի արձանը տեղադրված էր Դերջան գավառում և, հավանաբար, նրան նվիրված Գառնիի հեթանոսական տաճարում։ Պատերազմի, քաջության ու հաղթանակի, ամպրոպի ու կայծակի աստված Վահագնի, ինչպես նաև սիրո ու գեղեցկության աստվածուհի

Աստղիկի արձանները գտնվում էին Մեծ Հայքի Տուրուբերան աշխարհի Տարոն

գավառում՝ Աշտիշատ քաղաքի տաճարներում : Աստղիկի ևս մեկ արձան Արտաշես Ա արքան կանգնեցրել էր Արտամետ քաղաքում՝ Վանա լճի արևելյան ափին:

Տիգրան Մեծի և Արտավազդ Բ-ի ժամանակներում հայկական հեթանոսական դիցարանի աստվածները համադրվում էին հին հունական աստվածների հետ և նրանց տրվում էին հայկական անուններ: Այսպես , Զևսը կոչվում էր Արամազդ , Արտեմիսը՝ Անահիտ , Աթենասը՝ Նանե , Ապոլլոնը՝ Տիր , Հերակլեսը՝ Վահագն , Աֆրոդիտեն՝ Աստղիկ և այլն : Դա հնարավորություն էր տալիս հելլենիստական աշխարհի այս կամ այն երկրից բերել արձաններ ու տեղադրել հայկական տաճարներում :

Այդ մասին բազմաթիվ տեղեկություններ կան Մովսես Խորենացու «Պատմություն Հայոց» աշխատության մեջ :

Աստվածների քանդակներից զատ , Հայաստանի հեթանոսական տաճաներում զետեղված էին նաև թագավորերի ու նրանց նախնյաց արձանները:

Գրավոր աղբյուրներում եղած՝ թեկուզև սակավաթիվ տվյալները թույլ են տալիս որոշ չափով պատկերացում կազմել , թե ինչ նյութեր էին օգտագործում և տեխնիկական ինչ եղանակներ էին կիրառում Հին Հայաստանի քանդակագործները : 5-րդ դարի հայ պատմիչ Ագաթանգեղոսը գրում է , որ հեթանոսական կուռքերի տաշածո , ձուլածո , կռածո և փորագիր արձանները պատրաստվում էին ինչպես փայտի ու քարի տարբեր տեսակներից, այնպես էլ պղնձից (բրոնզից), արծաթից ու ոսկուց :

Արձանները տարբեր չափսերի էին՝ փոքրադիր թեթև, շարժական կուռքերից մինչև ծանրաքաշ մեծադիր քանդակներ: Այսպես, Անահիտ աստվածուհու ոսկե արձաններից մեկը մարդահասակ էր , իսկ մահացող և հարություն առնող բնության աստված Գիսանեի ու պտղաբերության և հողագործության աստվածուհի Դեմետրեի բրոնզաձույլ արձանների բարձրությունը 7-8 մետր էր :



Քարե մարդակերպ կուռքերի քանդակման ավանդույթը գալիս էր նախաուրարտական և ուրարտական ժամանակներից : Դա են վկայում Դվինում և

Հին Հայաստանի այլ բնակավայրերում հայտնաբերված տղամարդկանց տուֆակերտ գլուխները , ինչպես նաև ամբողջ հասակով ֆիգուրները : Դրանցից մեկի՝ Մ.թ.ա. 6-4 -րդ դարերով թվագրվող, այժմ Հայաստանի պատմության թանգարանում պահվող քանդակի բեկորները գտնվել են Սևանի հյուսիսային ափին ՝ Ծովագյուղի մոտ: Հեթանոսական Հայաստանի կերպարվեստում առկա երկրորդ ուղությունը հելլենիստական էր: Պահպանվել են այդ ուղղությունը ներկայացնող ՝ ինչպես դրսից ներմուծված, այնպես էլ հենց Հայաստանում ստեղծված մի շարք քանդակներ: Դրանցից առավել հայտնի է Արևմտյան Հայաստանում գտնված և այսօր Լոնդոնի Բրիտանական թանգարանում ցուցադրվող ՝ Անահիտ -Արտեմիսի բրոնզե քանդակի գլուխը (Մ.թ.ա. 2 - րդ դար) : Այն գերազանցում է բնական չափսերը և ջարդված է պարանոցի հիմքից: Պահպանվել է միայն ձախ ուսի փոքրիկ մասը: Բացակայում է գլխի հետնամասը: Դիցուհու ալիքաձև վարսերը մեջտեղից բացված են, երկու կողմից ետ են սանրված ու գոտևոր վածկլոր վարսակալով: Անահիտի դեմքին առանձնահատուկ հմայք է տալիս նրա մեղմանուշ , քնքուշ հայացքը, կիսաբաց բերանը, գլխի թեթև թեքվածքը : Նույն թանգարանի նույն ցուցափեղկում է ցուցադրված նաև աստվածուհու ձախձեռքի դաստակը:

Դիտիր հայկական հեթանոս աստվածների մասին պատմող ֆիլմը

Հայաստանում հայտնաբերված հեթանոսական քանդակի ուշագրավ նմուշ է կանացի մարմարե արձանը ՝ այսպես կոչված «Աֆրոդիտեն» (Մ.թ.ա. 2-րդ դարի վերջ - Մ.թ.ա. 1- ին դարի սկիզբ), որը պեղվել է 1971 թվականին Արտաշատում և այժմ գտնվում է Հայաստանի պատմության թանգարանում : Այդ փոքրադիր (բարձրությունը ՝ 57 սմ) ու բավական նրբագեղ քանդակի գլուխը , աջ ձեռքը և ձախի մի մասը չեն պահպանվել: Դա հին հունական դասական քանդակների ձևերն ընդօրինակող ուշ հելլենիստական շրջանի ստեղծագործություն է :

Բարակ շապիկը չի քողարկում կոչված երիտասարդ կնոջ մարմնի գեղեցկությունը, իսկ փոքր- ինչ դեպի ձախ թեքված իրանը և ծնկից ծալված աջ ոտքը քանդակին հաղորդում են նուրբ ու նազելի տեսք:

Է՛լ ավելի ուշ շրջանի աշխատանք է հայ թագավորների երբեմնի ամառային նստավայրը հանդիսացող Գառնիի ամրոցում 1963 թվականին հայտնաբերված կանացի մարմարե իրանը (բարձ Ջուրներությունը ՝ 50 սմ) : Կնոջ հագին կարճ տունիկա է , որը գոտկատեղից ցած ուղղաձիգ խիտ ծալքեր ունի : Գառնիի այդ քանդակը Հայաստանում հայտնաբերված ՝ ուշ անտիկ շրջանի (Մ.թ.ա. 3-րդ դար) եզակի հուշարձան է : Հին Հայաստանում զարգացած էր նաև ճարտարապետության հետ սերտորեն կապված քարի գեղարվեստական փորագրությունը : Շենքերը զարդարվում էին հարթաքանդակներով ու բարձրաքանդակներով ինչպես ներսից , այնպես էլ դրսից: Դրա խոսուն ապացույցներն են 1969-1975 թվականներին ճարտարապետ Ալեքսանդր Սահինյանի նախագծով և նրա ղեկավարությամբ վերականգնված Գառնիի հեթանոսական տաճարի (Մ.թ.ա. 1-ին դար)՝ երկրաչափական և բուսական նախշերից հյուսված բազալտե զարդաքանդակները: Գառնիի տաճարի ռելիեֆներում հանդիպում են նաև մարդկանց կերպարներ: Նկատի ունենք տաճարի մուտքի աստիճանները եզերող հենապատերի վրա քանդակված՝ ծնկներին հենված երկու պատանի ատլանտները: Հեթանոսական Հայաստանում մոնումենտալ ու դեկորատիվ նկարչությունը ներկայացված էր որմնանկարներով և խճանկար ներով: Դժբախտաբար, մեզ չեն հասել այդ շրջանի հայկական որմնանկարչության նմուշները : Ինչ վերաբերում է խճանկարչությանը, ապա դրա հազվադեպ, եզակի օրինակները , այնուամենայնիվ , պահպանվել են: Առաջին հերթին հիշատակության է արժանի այն հանրահայտ խճանկարը, որը հայտնաբերվել է 1953 թվականին Գառնիի տաճարից շուրջ 50 մետր հեռավորության վրա գտնվող ՝ մ.թ. 3-րդ դարում կառուցված բաղնիքի հանդերձարանի հատակին:

Դիտիր Գառնիի տաճարի մասին պատմող ֆիլմը

Բավական խոշոր չափսեր(2,90 x 2,90 մետր) ունեցող քառակուսի խճանկարը շարված է գույնզգույն գետաքարերի ուղղանկյուն , եռանկյուն և էլիպսաձև մանր

կտորներից : Ծովի բաց կանաչ ֆոնին ներկայացված խճապատկերը բաղկացած է դիցաբանական մի շարք թեմաներից : Հորինվածքի կենտրոնում զարդավոր շրջանակի մեջ , տեսնում ենք Օվկիանոսի և Ծովի այլաբանական կերպարները՝

խտամազ եղջուրավոր տղամարդու և գլխին խեցգետնի չանչեր կրող , աչքերը լայն բացած կնոջ տեսքով : Այդ կերպարների գլխավերևում կարելի է կարդալ կարմրագույն քարերով հավաքված հունարեն հետևյալ մակագրությունը . « ՉՍտացանք անգամ սատկած ձուկ ՝ ո՛չ Ծովից , ո՛չ Օվկիանոսից » : Տվյալ հորինվածքի շուրջ պատկերված են ձկնորսներ, ինչպես նաև հին հունական դիցաբանությունից մեզ հայտնի ծովային տարբեր աստվածություններ, ծովի իրական և անիրական՝ ֆանտաստիկ բնակիչներ : Ուշադրություն են գրավում արևելյան շեշտված դիմագծեր ունեցող մարդկանց կերպարների հարթապատկերային ընդհանրացված ՝ գրեթե սխեմատիկ ձևերը :

Հատված Գառնիի բաղնիքի հանդերձարանի հատակաղիր խճանկարից , 3 - րդ դար :

Խճանկարն աչքի է ընկնում գունային հարուստ ելևէջներով , որտեղ գերիշխում են կանաչ, վարդագույն, դեղին ու ճերմակ գուներանգները: Թեև գույները շատ վառ չեն , սակայն ծովի բաց կանաչ ֆոնին ստեղծում են ակնահաճո նուրբ և գեղեցիկ տոնայնություն :

Գառնիի խճանկարը հեթանոսական Հայաստանի մոնումենտալ-դեկորատիվ նկարչության բացառիկ ստեղծագործություն է : Պատկերի բարդ հորինվածքը, հարուստ գունաշարը, տեխնիկական ու կատարողական վարպետությունը վկայում են, որ այն մեզանում երբևէ ստեղծված խճանկարներից



առաջինը չէր : Դա հաստատում են նաև համեմատաբար վերջերս Հայաստանում կա տարված հնագիտական պեղումները: Այսպես՝ Արտաշատում, Արաքս գետի ափին 2003 թվականին սկսված պեղումների արդյունքում բացվել են անտիկ շրջանի հասարակակ մեկ այլ 16 բաղնիքի ավերակները, որտեղ հատվածաբար պահպանվել են մ.թ. 1-ին և 2-րդ դարերով թվագրվող խճազարդ հատակադիր պատկերներ :

Դիտիր Հին Արտաշատի մասին պատմող ֆիլմը:

Հին և հելլենիստական Հայաստանում , քանդակագործության ու մոնումենտալ -դեկորատիվ նկարչության հետ մեկտեղ , զարգացել է նաև գեղարվեստական իրերի ու կենցաղային առարկաների արտադրությունը: Լոնդոնի Բրիտանական թանգարանին են պատկանում Մեծ Հայքի թագավորության Երզնկա (ներկայիս Էրզինջան, Թուրքիա) քաղաքի մոտակայքում հայտնաբերված ՝ մ. թ. ա. 6-5 րդ դարերով թվագրվող արծաթե ռիթոնը, դրվագազարդ թասը, մի քանի գավաթներ և այլն: Նմանատիպ ռիթոն, թաս և թևավոր քարայծի տեսքով խոշոր անոթի արծաթե բռնակ պահվում են Լուվրի թանգարանում: Այդօրինակ ևս մի բռնակ գտնվում է Բեռլինի թանգարաններից մեկում: Պլաստիկական արտահայտիչ՝ շարժուն ու ճկուն ձևերի ավարտվածության և կատարելության առումով անօրինակ են Հայաստանում հայտնաբերված՝ սրընթաց ցատկի պահին պատկերված թևավոր երկու քարայծերը (մ.թ.ա. 4-րդ դար), որոնք ծառայել են որպես արծաթե ամանի բռնակներ: Դրանք ևս պատրաստված են արծաթից, սակայն կենդանիների եղջյուրները, դնչերը, սմբակները, մկանները և մասամբ թևերը զարդարված են ոսկով:

Բրիտանական թանգարանում և Լուվրում պահվող վերոհիշյալ թասերը, որոնք նախկինում համարվում էին Աքեմենյան Իրանի դեկորատիվ-կիրառական արվեստի նմուշներ, իրականում կրում են ուրարտական արվեստի բացահայտ ազդեցությունը՝ ակներևաբար ցուցաբերելով Թոփրաքկալեում և Կարմիր բլուրում պեղված բրոնզե համանման անոթների հետ իրենց ունեցած ուղղակի կապը:

Արծաթե ռիթոն՝ եղջերագավաթ՝ (գինի խմելու անոթ) մորուքավոր հեծյալի պատկերով , մ.թ.ա 5-4-րդ դարեր,

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում 1968 թվականին էրեբունի բերդաքաղաքի տարածքում գտնված՝ մ.թ.ա. 5-4-րդ դարերին վերագրվող արծաթե մի քանի ռիթոններից ու խոշոր գավաթից բաղկացած գանձը: Ռիթոններից մեկը, որն այժմ պահվում է Երևանի «էրեբունի» պատմահնագիտական արգելոցթանգարանում, զարդարված է աջ կողքին կարճ թուր կամ դաշույն կրող մորուքավոր հեծյալի պատկերով; Նրա գնդանման բարձր գլխարկն ու ող հանդերձանքը հիշեցնում են Աքեմենյան Իրանի մայրաքաղաք Պերսեպոլիսի արքայական պալատների նշանավոր ռելիեֆներում (մ.թ.ա. 6-5-րդ դարը) պատկերված հայ հարկատուների գլխարկները և զգեստեղենը: Նույն թանգարանին պատկանող արծաթե մեկ այլ ծագարաձ լայնաբերան ռիթոնի ներքևի մասում քանդակված ձիու գլուխը ևս նման է Պերսեպոլիսի նույն ռելիեֆներում պատկերված ձիերի գլուխներին, թեպետև զուրկ չէ հելլենիստական որոշ գծերից մասնավորապես՝ իրապաշտական լիարյուն, կենդանի ձևերից: Աքեմենյան դարարջանի արծաթե իրերի հայտնաբերումն էրեբունիի տարածքում կրկին հաստատում է, որ ուրարտական այդ կենտրոնը շարունակել է կարևոր դեր խաղալ նաև Վանի թագավորության է անկումից հետո՝ մ.թ.ա. 6-4-րդ դարերում, և հայ վարպետները շարունակել են զարգացնել ուրարտական մշակույթային ու գեղարվեստական ավանդույթները պատմական նոր պայմաններում:

Հին Հայաստանի քաղաքների և ամրոցների պեղումների ժամանակ գտնվել են ինչպես տեղական, ավանդական, այնպես էլ հելլենիստական ուղղություններին հարող մետաղի գեղարվեստական մշակման մի շարք բարձրարվեստ, ընտիր նմուշներ: Առաջինների թվին են պատկանում Արտաշատում հայտնաբերված բրոնզե և արծաթե արձանիկները, որոնցից մեկը եղնիկի գլխին նստած արծվի բրոնզաձույլ ֆիգուր է: Հայաստանում պեղված նույնպիսի ևս երկու բրոնզե ֆիգուրներ ցուցադրվում են Հայաուստանի պատմության թանգարանում և Լուվրի թանգարանում:

Գեղարվեստական մետաղաձուլման հրաշալի օրինակ է Արտաշատում հայտնաբերված այծի արծաթե արձանիկը: Նույն տեղում հայտնաբերվել են նաև

մեծաչափ տարբեր անոթների արծաթե ձուլածո բռնակներ, որոնցից մեկն ունի

ձիաձկան (ծովաձիու) տեսք, իսկ մյուսն ավարտվում է թևավոր ամուրի պատկերով: Թե իրենց ոճով, թե կերպարանքով երկու բռնակներն էլ հելլենիստական տիպիկ արտադրանքներ են: Արծաթից և ոսկուց պատրաստված իրեր ու առարկաներ են պեղվել շինարարական աշխատանքների ժամանակ Սիսիան քաղաքի ծայրամասում բացված՝ մ.թ.ա. 1-ին դարի դամբարանում: Գեղարվեստական տեսակետից հատկապես ուշագրավ են հելլենիստական դարաշրջանին բնորոշ մեդալիոնները (վզնոցները, պարանոցի զարդերը) արծիվների պատկերներով և հին հունական պտղաբերության աստվածուհի Դեմետրային հիշեցնող կնոջ կերպարով: Ոսկերչական հիասքանչ արտադրանք է երկու ծայրից առյուծների գլխիկներով ավարտվող ապարանջանը:

Դիտիր Տիգրան Մեծի մասին պատմող ֆիլմը

Հելլենիստական Հայաստանի արվեստի հրաշալի նմուշներ են Տիգրան Մեծի, Արտավազդ Բ-ի և Արտաշեսյան արքայատոհմի այլ թագավորների գահակալության ժամանակ հատված մետաղադրամները: Դրանց դիմերեսին պատկերված հայ բոլոր արքաները կրում են ատամնավոր թագեր՝ ականջակներով (ականջակալներով) և վակասով (պարանոցակալով): Կասկածից վեր է պատկերների արտաքին՝ պորտրետա– յին նմանությունը: Անչափ տպավորիչ է Տիգրան Մեծի դեմքը, հատկապես նրա սուր, թափանցող հայացքը, որը վկայում է հայոց արքայի անսասան կամքի և ուժեղ, տոկուն բնավորության մասին:

Ուշ հելլենիստական շրջանից՝ մ.թ. առաջին դարերից, մեզ են հասել նաև մետաղից պատրաստված գեղարվեստական իրերի առանձին օրինակներ: Ուշադրության է արժանի, մասնավորաբար, 2-րդ դարի կեսերին իշխած Մեծ Հայցի Բակուր թագավորի հունարեն մակագրությամբ արծաթե գլանաձև թասը, որը հայտնաբերվել է 1935 թվականին Ռուսաստանի հարավում՝ Մայկոպ քաղաքի մոտակայքում կատարված հնագիտական պեղումների ժամանակ: Թասի արտաքին պատերը զարդարող ռելիեֆներում պատկերված են երաժշտական գործիքներ, հին հունական դիցաբանության հերոսների դիմակներ, ինչպես նաև պար բռնած մենադայի (բաքոսուհու) ու կենդանիների (առյուծի , շների) պատկերներ:

Հելլենիստական Հայաստանում զարգացած էր նաև գեղարվեստական խեցեղենի արտադրությունը: Արմավիրում, Գառնիում, Արտաշատում և Դվինում հայտնաբերվել են բուսական ու երկրաչափական մուգ կարմիր կամ սև նախշերով

ծածկած և լավ փայլեցված կավե տարաձև, տարբեր չափսերի անոթներ։

Արմավիրում գտնված խեցեղեն իրերից առանձնանում են ընտանի և վայրի կենդանիների գլուխներով զարդարված անոթները։

Ստեղծվել են նաև թրծակավե արձանիկներ՝ Գառնիում գտնվել է կանացի արձանիկի ներքևի մասը՝ վերնազգեստի խիստ ուղղահայաց ծալքերով, Արմավիրում պեղվել է նստած և մանկանը ծնկներին առած մոր արձանիկը, իսկ Արտաշատում հայտնաբերվել են սրածայր գլխարկներ և քամուց ծածանվող թիկնոցներ կրող ձիավորների արձանիկներ։ Հեթանոսական Հայաստանի արվեստի մեզ հասած ստեղծագործությունները տարատեսակ են և գեղարվեստական առումով արժեքավոր։ Դրանք մեզ հնարավորություն են տալիս ընդհանուր պատկերացում կազմելու հայ մշակույթի ու արվեստի պատմական զարգացման մասին՝ սկսած Վանի թագավորության անկման պահից մինչև Հայաստանի քրիստոնեության ընդունումը։

Դասի Պլան

Դասի տեսակը — Զրույց կերպարվեստի մասին (90ր.)

Դասի թեման — Հին և հելլենիստական Հայաստան

Դասի նպատակը `

1. Ծանոթացնել սովորողներին Հայկական կերպարվեստի ծագման և հետագա զարգացման պատմությունը
2. Ծանոթացնել կերպարվեստի կարևորագույն ժամանակաշրջանին
3. Օժանադկի երեխայի բազմակողմանի զարգացմանը
4. Գեղագիտական ճաշակի զարգացման
5. Ազգային և համամակարդակային հոգևոր արժեքներին հաղորդակցում

Դասի կահավորում — նկարներ, ֆիլմ, տետր, գրիչ, A1 ֆորմատ

Դասի ընթացքը

Զրույց — հայկական կերպարվեստի ծագման զարգացման մասին

Ֆիլմի դիտում

Քննադատում

Նշում տետրում

Զրույց — Հելլենիզմ շրջանը Հայաստանում

Ֆիլմի դիտում

Քննադատում

Նշում տետրում

Գործնական աշխատանք — պաստառների պատրաստում

Դասի ամփոփում (1-2ր)

Գնահատում